

ԽԱՂՈՂԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՊԸ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՕՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ
ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ (ԱՐԱՐԱՏՅԱՆ
ԴԱՇՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հովհաննիսյան Ն., Վարդանյան Թ.

ԵՊՀ, Երևան, Հայաստան, narekhovhannisyan.ysu@gmail.com, tvardanian@ysu.am


Աշխատանքում ուսումնասիրվել և վերլուծվել են Արարատյան դաշտում տեղակայված թվով 5 օդերևութաբանական կայանների և դիտակետերի (Արարատ, Արտաշատ, Արմավիր, Երևան-Ագրո, Արաբկիր) բազմամյա դիտարկումների շարքերը, որոնք ընդգրկում են 1966-2015թթ (50 տարի): Դիտարկման շարքի նման երկարությունը թույլ է տալիս արժանահավատ հետևություններ և եզրակացություններ անել այս կամ այն օդերևութաբանական երևույթի ռեժիմի և ընթացքի մասին, ինչպես նաև բացահայտել ներկա միտումներն ու օրինաչափությունները և հնարավորության դեպքում կանխատեսել սպասվելիք փոփոխությունները: Այստեղ մասնավորապես վերլուծվել են այն ժամանակահատվածի միջին տարեկան ջերմաստիճանները և տեղումները, որի ընթացքում միջին ամսական ջերմաստիճանները բարձր են եղել +10°C-ից. Արարատյան դաշտում այդ ժամանակաշրջանը հիմնականում համընկնում է օրացույցային ապրիլից հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածի հետ, որն էլ պայմանականորեն կարելի է կոչել վեգետացիոն սեզոն:


Հոդվածում փորձ է արվել կլիմայական բաղադրիչի հետ համադրել նաև գյուղատնտեսական (ագրոնոմիական) բաղադրիչը տվյալ դեպքում խաղողի բերքատվության միջին տարեկան ցուցանիշը միևնույն տարածքի համար, սակայն փոքր-ինչ ավելի սակավ տարիներ ընդգրկող ժամանակահատվածի համար, այն է 2004-2016թթ: Արարատյան դաշտի խաղողի բերքատվության ցուցանիշը ստացվել է Արարատի, Արմավիրի մարզերի և Երևան քաղաքի բերքատվության ցուցանիշների գումարից:

Վերլուծելով Հայհիդրոմետի տրամադրած դիտարկումների շարքերը կարելի է հանգել այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ Արարատյան դաշտում վերջին

50 տարվա ընթացքում վեգետացիոն ժամանակահատվածի գումարային ջերմաստիճաններն ունեն աճի միտում, որոնք որոշ կայաններում ավելի կտրուկ են արտահայտված որոշներում էլ՝ ավելի մեղմ (նկ. 1): Տեղումները հիմնականում նվազման միտում են դրսևորել: Դիտարկելով կառուցված գրաֆիկներին ակնհայտ էրևում է, որ բոլոր հինգ կայաններում ջերմաստիճանի ակնհայտ աճ է դիտվել (նկ. 1):

Արարատ օդկայանում տվյալ ժամանակահատվածի համար բացարձակ նվազագույն գումարային ջերմաստիճան դիտվել է հեռավոր 1967թ-ին՝ 132,9°C, իսկ առավելագույն՝ 1989թ-ին՝ 151,7°C, տատանման լայնույթը կազմել է 18,8°C: Արտաշատ կայանում համապատասխանաբար 1967թ-ին գրանցվել է 125,7°C, իսկ 2006թ-ին՝ 147,6°C:






Նկ. 1 Օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների փոփոխությունների դինամիկան Արարատյան դաշտի մի քանի օդկայաններում (ըստ Հայպետհիդրոմետի տվյալների)

Երևանագրոում գրանցել է հետևյալ ցուցանիշները՝ 1991թ-123,0°C և 2006թ-150,1°C: Արմավիր օդերևութաբանական կայանում նվազագույն և առավելագույն տվյալները հետևյալն են՝ 1967թ-124,6°C և 1989թ-149,4°C: Արաբկիր օդ. կայանում դրանք հետևյալ տեսքն ունեն՝ 1992թ-120,4°C և 2015թ-148,2°C:


Տեղումների դինամիկան գրոյին մոտ է, այսինքն էական փոփոխություն չի դիտվել սակայն թույլ աճ գրեթե բոլոր կայաններում նշմարվում է (նկ. 1):

Աշխատանքում փորձ է արվել բացահայտել խաղողի բերքատվության հնարավոր կապը Արարատյան դաշտում 2004-2016 թթ դիտված գունարային ջերմաստիճանների հետ: Ինչպես տեսնում ենք կապը շատ թույլ է և հետևաբար չենք կարող անել որևէ հստակ և հուսալի եզրակացություն (նկ. 2):




Նկ. 2 Խաղողի բերքատվության հնարավոր կապը Արարատյան դաշտի վեգետացիոն շրջանում դիտված 2004-2016 թթ գումարային ջերմաստիճանների հետ

Նույն մեթոդով դիտարկվել են նաև Արարատյան դաշտի նույն ժամանակահատվածի գումարային տեղումների և խաղողի բերքատվության միջև եղած հնարավոր կապը, սակայն այստեղ կապ բոլորովին չի հայտնաբերվել, դա է վկայում նաև կոռելացիայի գործակցի չափազանց ցածր արժեքը՝ $r=0,0016$ (նկ. 3):




Նկ. 3 Խաղողի բերքատվության հնարավոր կապը Արարատյան դաշտի վեգետացիոն շրջանում դիտված 2004-2016 թթ տեղումների հետ

Ստորև ներկայացված է Արարատյան դաշտի վեգետացիոն ժամանակահատվածի ջերմաստիճանների և տեղումների կապի գրաֆիկը, որում կարելի է նշմարել թույլ կապ, որը սակայն այդքան էլ հուսալի չէ (նկ. 4):



Նկ. 4 Արարատյան դաշտի վեգետացիոն շրջանում դիտված 2004-2016 թթ գումարային ջերմաստիճանների կապը տեղումների հետ

Վերջին տասնամյակում խաղողի բերքատվությունը աճ է արձանագրվել, ընդ որում առավել բարձր ցուցանիշ գրանցվել է 2015թ-ին՝ 2666209g, իսկ 2016թ-ը, ի հակառակ վերջինիս, աչքի է ընկել նվազ բերքատվությամբ: Ցածր բերքատվությամբ առանձնանում են նաև 2004 և 2005թթ, համապատասխանաբար 1402071g և 1341806g բերքի գումարային արժեքներով:



Նկ. 4 Խաղողի բերքի դինամիկան Արարատյան դաշտում 2004-2016 թթ [1]

Այսպիսով, վերլուծելով աշխատանքը կարելի է եզրակացնել, որ Արարատյան դաշտում ուսումնասիրվող ժամանակահատվածում խաղողի բերքատվությունը մեծապես կախված չի եղել ջերմաստիճանից և տեղումներից, ինչին իր հերթին նպաստել է ոռոգովի խաղողագործությունը, որը մասնավորապես նվազագույնի է հասցրել տեղումների գործոնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե: Գյուղատնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2004-2016 թթ
2. Научно - прикладной справочник по климату СССР. Сер. 3, вып. 16 :Армянская ССР. Л., 1989, 365 с.
3. Рождественский А.В., Чеботарев А.И. Статистические методы в гидрологии. Л., 1974, 424 с.

POSSIBLE CONNECTION BETWEEN GRAPE HARVEST AND AIR TEMPERATURE AND PRECIPITATION CHANGES DURING THE VEGETATIVE PERIOD (CASE STUDY: ARARAT VALLEY)

Hovhannisyan N., Vardanyan T.

Yerevan State University, Yerevan, Armenia, tvardanian@ysu.am

Abstract

In the article the long-term observations of temperature and precipitation changes have been analyzed for 5 meteorological stations in the vegetative period. We have attempted to find correlation between the grape harvest and above mentioned meteorological features.